Եղիշե Չարենց

Ինչքան զանգ են տալիս — իմ միտն ես գալիս

Ինչքան զանգ են տալիս իմ միտն ես գալիս՝
Զանգի նման անուշ, հալա՛լ ես, գոգալ:
Ինչքան գարուն բացվի դու հետն ես գալիս՝
Գարնան ջրի նման վարար ես, գոգա՛լ:

Ոնց որ պանդուխտ ըլիմ աշխարհում հիմի,
Անունիդ ո՛ւխտ ըլիմ աշխարհում հիմի,
Ասես թե՝ թո՛ւղթ ըլիմ աշխարհում հիմի
Գարնան քամու նման տարար ես, գոգա՛լ:

Չես հասկանա իսկի, թե ի՞նչ ես արե.
Հազար մարդ ես էշխից գերեզման տարե.
Էշխդ օսկե գրիչ, սիրտս դա՛վթար է
Արնե գրով գրած զարա՛ր ես, գոգա՛լ: